ԴԱՆԱԿ՝ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԹԻԿՈՒՆՔԻՆ

ԲԱՐԶՐԱԶԱՅՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մեղվափեթակի է նմանվում խմբագրությունն այս օրերին: Նամակների հոսք և չդադարող հեռախոսազանգեր, այցելուների շարան մեծ ու փոքր խմբերով և այս ամենը՝ անընդհատ, աշխատանքային օրվա բոլոր ժամերին: Տարբեր տարիքի, զբաղմունքի տեր ու կրթական մակարդակ ունեցող մարդիկ են մեզ դիմողները, բայց մեկն է այս օրերին նրանց բոլորին հուզող ու հետաքրքրող, նրանց հոգին աբեկոծող հարցը. որքա՞ն է շարունակվելու Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման ձգձգումը, ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակումը:

Շրջափակման ակտը որակելով որպես բացահայտ ոտընձգություն սուվերեն մի հանրապետության կողմից մյուսի նկատմամբ, ընթերցողները պահանջում են իրենց ձայնը հասցնել կենտրոնական իշխանություններին, որոնք պարտավոր են լավ իմանալ, որ շրջափակումը տեղի է ունենում Ադրբեջանի ղեկավարների գիտությամբ ու թողտվությամբ, որոնք իրենց շատ լավ են զգում կենտրոնի կողմից շնորհված անպատժելիության մթնոլորտում: Եվ ահա, անսալով մեր ընթերցողների համառ պահանջներին, այսօր խոսքը տալիս ենք նրանցից երկուսին:

ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆ.— Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ժողովրդական կրթության ինստիտուտի ամբիոնի վարիչ

— Դարավերջի վանդալիզմ, մարդու իրավունքների չլսված ոտնահարում, թուք ու մուր արդարության ու ճշմարտության երեսին՝ այլ կերպ որակել չես կարող այն, ինչը մեր հանրապետության գլխին բերում է մեր հարևան «ինտերնացիոնալ» Ադրբեջանը: Կալանք է դրված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքի վրա, ամենավայրագ ձևերով շարունակվում են ԼՂԻՄ-ի և Խորհրդային Հայաստանի տնտեսական շրջափակումը, Բաքվում և Ադրբեջանի մյուս վայրերում տակավին մնացած հայերի հետապնդումն ու հալածանքը: Կա՞ արդյոք մեկը, որ այսօր չընմբռնի ու չհասկանա, որ տնտեսական շրջափակումը հարված է ոչ միայն անընկճելի Ղարաբաղին ու Հայաստանին, այլև մեր մեծ երկրի բոլոր այն ժողովուրդներին, ովքեր օգնության ձեռք են մեկնել ավերիչ երկրաշարժի ահավոր ցավերից տնքացող մեր հանրապետությանը: Շրջափակումն, անշուշտ, հարված է նաև բոլոր նրանց, ովքեր ավերիչ երկրաշարժի առաջին իսկ օրերին եղան Հայաստանում՝ հանրապետության և նրա տուժած շրջանների վերածնունդը կազմակերպելու առաքելությամբ:

Եվ ահա այն պահին, երբ ասես ուշքի էր գալիս ու մեջքը ուղղում վիրավոր մեր լեռնաշխարհը, թիկունքից հարվածող դանակի նման գործի դրվեց շրջափակումը: Չեմ թվարկի, թե ինչպիսի մեծ վնասներ է պատճառել երկու ամիս, իսկ Ղարաբաղի նկատմամբ՝ մեկուկես տարի տևող ամոթալի այդ ակտը: Դա ամեն ոք տեսնում է սեփական աչքերով և հեռուստատեսության էկրաններին:

Թվում էր, թե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում արված հիշեցումներից հետո Ադրբեջանը ուշքի կգա և մեկ-երկու օրվա ընթացքում վերջ կտա իր ձեռնարկած խայտառակ ակտին: Բայց ահա պարզվում է, որ վերացման խոստումի տակ շրջափակումն ընդունում է քողարկված և ավելի խայտառակ ու ամոթալի ձևեր: Վկայությունը մի կերպ Հայաստան հասած մեկ-երկու գնացքներն են, որոնք պարունակում են քարացած ցեմենտ, փտած կարտոֆիլ, տնակների ջարդ ու փշուր արված կմախքներ և այլն: Նայում ես այդ ամենին, գընդակներից ու քարերից ծակծկված ապրանքային վագոններին ու կողոպտված սարքավորումներին, և սրտիցդ արյուն է կաթում: Ո՞ր երկրում և ո՞ր դարում ենք ապրում մենք: Մի՞թե սա սոցիալիզմի առաջին երկիրն է:

Մի առիթով ես բարձրաձայն անվստահություն եմ հայտնել ընկեր Մ. Ս. Գորբաչովի ղեկավարած մեր կուսակցության Կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Կարծում եմ, ես մենակ չեմ, և այդպես կըվարվեն շատերը, քանի դեռ չի վերացվել շրջափակումը, քանի դեռ կշարունակվեն անպատիժ մնալ «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» մոլեգնած գյադաները՝ պատրաստ իրենց նետելու վերակառուցման գնացքի անիվների տակ:

Դուք լավ գիտեք նաև, թե ինչպիսի վիճակում են Հայաստան հասնում Բաքվից ու Ադրբեջանի մյուս հայաշատ վայրերից բռնագաղթվող մեր հայրենակիցները: Այսպես կոչված «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կազմակերպության կտրիճները առիթը բաց չեն թողնում «ադրբեջանական դրախտից» մազապուրծ հայերին՝ կանանց ու երեխաներին, կողոպտել ու թալանել, նույնիսկ վերջին պահին, գաղթի վագոններում: Ահա թե ինչ աստիճանի կարող է հասնել անպատժելիության ցնորքով տարված ադրբեջանական ազգայնամոլի «գթասրտությունը»:

Ես էլ չեմ խոսում բացահայտ բռնությունների, ադրբեջանական գյուղերում ու քաղաքներում հայերի նկատմամբ շարունակվող ավազակային հարձակումների, թալանի ու ընպանությունների մասին:

Բուն նյութից շատ չհեռանալու համար ասեմ, որ միայն մեկ շաբաթվա շրջափակումը, նախնական տվյալներով, Հայաստանին հասցրել է ավելի քան հարյուր միլիոն ռուբլու վնաս: Եվ այդ ամենը մեր երկրի ղեկավարների և ամբողջ աշխարհի աչքերի առջև, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի օրերին: Մի առիթով ես հրապարակավ հայտարարեցի, որ ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքի բռնադատումը մահացու հարված է ամբողջ խորհրդային ֆեդերացիայի գագաթարին, որ մի հանրապետության կողմից մյուսի նկատմամբ իրականացվող տընտեսական ու քաղաքական շրջափակումը հղի է ամենածանր հետևանքներով, որը նման է թիկունքից խրվող դանակի՝ վերակառուցման ամբողջ համակարգին: Համոզված եմ, որ իմ կարծիքը բաժանում են շատերը:

ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ.— ՀԿԿ Լենինյան շրջկոմի կազմակերպական բաժնի վարիչ

— Ես ուզում եմ սկսել արդյունաբերական մեր շրջանի հիմնարկ-ձեռնարկություններում, շինարարական և մյուս կազմակերպություններում ստեղծված իրավիճակից, որը երկու բառով կարելի է բնութագրել այսպես. անելանելի իրավիճակ, դառը հիասթափություն: Պատկերացրեք ինքներդ. երկու ամիս անընդհատ մարդիկ չեն կարողանում ո՛չ նորմալ աշխատել, ո՛չ էլ, բնականաբար, նորմալ վարձատրվել: Միայն սեպտեմբեր ամսին շրջանը պակաս թողարկեց և սպառողներին չհասցրեց շուրջ 40 մլն ռուբլու արտադրանք: Դրան զուգընթաց բավականին բարդացան մեր արդյունաբերական ձեռնարկությունների և նրանց 5700 պատվիրատուների հարաբերությունները՝ պայմանագրային պարտավորությունները մեր կողմից չկատարելու պատճառով: Այսպիսով, հարևան հանրապետության կողմից Հայաստանի շրջափակումը խորացավ դարձավ նաև մեր հեռու և մոտ շատ ու շատ գործընկերների ու սպառողների համար:

Պետք է խոստովանել, որ շրջափակում կոչվող ամոթալի այդ ակտի հետևանքով հատկապես ծանր ու մեծ վնասներ կրեցին մեր հանրապետության և Երևան քաղաքի աշխատավորները: Այսպես, այդ նույն սեպտեմբեր ամսում շրջանի սննդարդյունաբերողները պակաս թողարկեցին, հետևաբար նաև պակաս վաճառվեց 600 հազար ռուբլու արտադրանք, իսկ թեթև արդյունաբերական ձեռնարկությունների կողմից պակաս թողարկված արտադրանքը, գումարային արտահայտությամբ, հասավ մեկուկես միլիոն ռուբլու սահմանագիծը:

Շրջափակումը առանձնապես ծանր նստեց այն կոլեկտիվների վրա, որոնք կոնկրետ պարտականություններ են ստանձնել հանրապետության տուժած շրջաններին օգնելու համար: Գաղտնիք չէ, որ ձմռան նախաշեմին առանձնապես կարևոր նշանակություն է ստանում աղետյալների համար նախատեսված տնակների կառուցումը: Մեր շրջանը ստանձնել է Ղուկասյանի շրջանին օգնություն ցույց տալու շեֆությունը և տարբեր աշխատանքներին զուգընթաց խոստացել կառուցել ու մինչև ձմեռ տեղադրել 3000 տնակ: Մինչև աշնան վերջը այդ գործը պետք է ավարտված լիներ: Մինչդեռ այսօրվա դրությամբ պատրաստվել է ընդամենը 1000 տնակ, որից տեղ է հասցվել ու տեղադրվել ընդամենը 300-ը: Ինչո՞ւ: Երկու պարզ պատճառով. շրջափակման հետևանքով խաթարվել է նյութամատակարարումը և երկրորդ՝ չկա վառելանյութ պատրաստի տնակները աղետյալ շրջան տեղափոխելու և տեղադրելու համար:

Մի ուրիշ դառնություն էլ է պատճառել մեզ շրջափակման «ստրատեգիան»: Չենք կարողանում Լեռնային Ղարաբաղ հասցնել ճամփա ընկնելու պատրաստ մեր ավտոշարասյունը՝ շինանյութերով, պարենով և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով բեռնված: Մեկուկես տարի շրջափակմանը դիմակայող Ղարաբաղի մեր հայրենակիցներին մենք օգնել չենք կարողանում այն պարզ պատճառով, որ շրջափակված են մեր հանրապետությունը ԼՂԻՄ-ին կապող բոլոր մայրուղիները: Հետևանքը պարզ է. ուղարկվելիք պարենամթերքի մի զգալի մասը արդեն փչացել, կորցրել է ապրանքային իր տեսքը: Սրանք փաստեր են, որոնք ցավ ու կսկիծ են բորբոքում:

Շրջանի կուսակցական կազմակերպությունները, սկսած շրջանային կոմիտեից մինչև արտադրամասային կուսակցական խմբերը, հնարավոր ու անհնար ամեն ինչ անում են աշխատավորների զայրույթը մեղմելու և ուժերը պլանային առաջադրանքների կատարմանը ուղղելու համար: Բայց որքա՞ն կարելի է խոստանալ ու համոզել: Շրջանի աշխատավորների մեջ սասանվում է հավատը կուսակցության ու կառավարության նկատմամբ: Մի՞թե Հայաստանը իսկապես անտեր է, մի՞թե արդարությունը մեր երկրում բուն չունի,— հարցնում են մարդիկ:

Ես բաժանում եմ ընկեր Ավագյանի այն միտքը, որ մի հանրապետության կողմից մյուսի շրջափակումը, արդարացի լուծում պահանջող հարցի արհեստական ձգձգումը ծանր հարված է վերակառուցման սրբազան գործին: Բայց և ուզում եմ հավատալ (ու տակավին հավատում եմ), որ արդարությունը չի մահանա, որ շրջափակումը վաղ թե ուշ կըվերացվի, բայց և այնպես, միացնելով իմ ձայնը շրջանի կոմունիստների, բոլոր աշխատավորների ձայնին, ուզում եմ ասել. իսկ ե՞րբ:

Տպագրության պատրաստեց
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԸ